600.0048.06.03.19

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

6 մարտի 2019 թվականի №48Ա
քաղ. Երևան

«ԱՐՋԱՁՈՐ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի համաձայն՝ լիցենզավորված անձը լիցենզավորված գործունեությանը վերաբերող հաշվետվությունները, այլ տեղեկատվությունը և անհրաժեշտ հիմնավորող փաստաթղթերը ներկայացնում է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ վերջինիս կողմից սահմանված ձևերով և կարգով,

բ) Հանձնաժողովի 2008 թվականի հունիսի 6-ի N308Ն որոշման 1-ին կետով հաստատված էլեկտրաէներգետիկական և ջերմամատակարարման համակարգերի լիցենզավորված անձանց կողմից Հանձնաժողով լիցենզավորված գործունեության վերաբերյալ տեխնիկատնտեսական տեղեկատվության ներկայացման կարգի (այսուհետ՝ Կարգ) №2 հավելվածի №2-2 ձևով նախատեսված՝ արտադրված էլեկտրական էներգիայի վերաբերյալ տեղեկատվությունը (այսուհետ՝ Տեղեկատվություն) էներգետիկայի բնագավառում լիցենզավորված անձանց կողմից ներկայացվում է կիսամյակային կտրվածքով՝ մինչև հաշվետու կիսամյակին հաջորդող ամսվա 25-ը,

գ) «ԱՐՋԱՁՈՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) 2018 թվականի 2-րդ կիսամյակի Տեղեկատվությունը Հանձնաժողով է ներկայացրել 2019 թվականի փետրվարի 5-ին,

դ) Հանձնաժողովը Ընկերության կողմից Տեղեկատվության ներկայացման՝ Կարգով սահմանված ժամկետի խախտման փաստի ուսումնասիրման նպատակով 2019 թվականի փետրվարի 5-ից վերջինիս նկատմամբ հարուցել է վարչական վարույթ, որի վերաբերյալ

Ընկերությունը ծանուցվել է Հանձնաժողովի 2019 թվականի փետրվարի 5-ի №ԱԲ-203Ս գրությամբ,

ե) Ընկերությունը, վարչական վարույթի շրջանակում, 2019 թվականի փետրվարի 21-ի գրությամբ, մատնանշելով որոշակի տեխնիկական բնույթի խնդիրներ, ըստ էության ընդունել է խախտման փաստն ու հայցել Հանձնաժողովի ներողամտությունը,

զ) Հանձնաժողովի կողմից իրականացված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը խախտել է Տեղեկատվության ներկայացման՝ Կարգով սահմանված ժամկետը, և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին և 9-րդ մասերը՝ հանձնաժողովը **որոշում է.**

1. Ընկերությանը նախազգուշացնել:
2. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ Մ.ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

ք. Երևան
6 մարտի 2019թ.